

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱԾՔՈՎ ԵՐԿԱԹՈՒՂԱՅԻՆ ՏՐԱՆՍՊՈՐՏՈՎ ՏԵՂԱՓՈԽՎՈՂ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՏԱՐԱՆՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Եվրասիական տնտեսական համայնքի շրջանակներում՝ Մաքսային միության անդամ պետությունների կառավարությունները, այսուհետ՝ Կողմեր,

հիմնվելով «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագրի դրույթների վրա,

Մաքսային միության մաքսային տարածքով երկաթուղային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների նկատմամբ մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի կիրառումն ապահովելու նպատակներով,

համաձայնեցին հետևյալի մասին.

Հոդված 1

Սույն Համաձայնագիրը սահմանում է Մաքսային միության մաքսային տարածքով երկաթուղային տրանսպորտով տեղափոխվող ապրանքների մաքսային տարանցման առանձնահատկությունները և չի տարածվում ֆիզիկական անձանց կողմից անձնական օգտագործման նպատակով ապրանքների և տրանսպորտային միջոցների տեղափոխման հետ կապված իրավահարաբերությունների վրա:

Հոդված 2

Սույն Համաձայնագրում օգտագործվում են հետևյալ հասկացությունները.

1) ՄԲՀՀ՝ «Միջազգային երկաթուղային բեռնային հաղորդակցության մասին» 1951 թվականի նոյեմբերի 1-ի համաձայնագիրը,

2) երկաթուղի՝ կազմակերպություն, որն իրականացնում է ապրանքների փոխադրում երկաթուղային տրանսպորտով,

3) Մաքսային միության երկաթուղի՝ Մաքսային միության անդամ պետությունների կազմակերպություն, որն իրականացնում է երկաթուղային տրանսպորտով ապրանքների փոխադրում՝ Մաքսային միության անդամ պետություններից մեկի տարածքի սահմաններում՝ ՄԲՀՀ-ին համապատասխան:

4) երկաթուղային բեռնագիր՝ ՄԲՀՀ-ի երկաթուղային բեռնագիրը կամ ՄԻԿ/ (Երկաթուղային տրանսպորտով բեռնափոխադրումների մասին միջազգային կոնվենցիայի միասնական իրավական կանոններ) (ՄԲՀՀ)-ի երկաթուղային բեռնագիրը, որը նախատեսված է ՄԲՀՀ-ով:

Սույն հոդվածով չնախատեսված հասկացություններն օգտագործվում են Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված նշանակություններով:

Հողված 3

Երկաթուղային տրանսպորտով ապրանքների փոխադրման դեպքում որպես տարանցիկ փոխադրման հայտարարագիր կարող են օգտագործվել երկաթուղային բեռնագիրը (ճանապարհային ամփոփագրի լրացուցիչ օրինակները՝ ուղարկող և նշանակման մաքսային մարմինների համար), Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ սահմանված տեղեկություններ պարունակող առևտրային կամ մաքսային փաստաթղթերը:

Երկաթուղային բեռնագիրը և առևտրային փաստաթղթերը որպես տարանցիկ փոխադրման հայտարարագիր օգտագործելու դեպքում, տարանցիկ փոխադրման հայտարարագրի հիմքը կազմում է երկաթուղային բեռնագիրը, իսկ մնացած առևտրային փաստաթղթերը համարվում են դրա անքակտելի մասը:

Տարանցիկ փոխադրման մեկ հայտարարագիրը ձևակերպվում է ապրանքների այն խմբաքանակի համար, որը փոխադրվում է մեկ ուղարկողի կողմից մեկ ստացողի հասցեով, մեկ երկաթուղային բեռնագրով, մեկ նշանակման կայարան:

Տարանցիկ փոխադրման հայտարարագրի տրամադրումը պետք է ուղեկցվի դրա էլեկտրոնային պատճենը ուղարկող մաքսային մարմնին տրամադրելով:

Եթե հայտարարատուն Մաքսային միության երկաթուղին է, իսկ որպես տարանցիկ փոխադրման հայտարարագիր ներկայացվում է մաքսային փաստաթուղթ, ապա Մաքսային միության երկաթուղին Մաքսային միության հանձնաժողովի կողմից սահմանված կարգով տարանցիկ փոխադրման հայտարարագրի վրա դնում է ամսաթիվ պարունակող դրոշմակնիք՝ հաստատված երկաթուղային կայարանի պատասխանատու աշխատակցի ստորագրությամբ:

Եթե հայտարարատուն Մաքսային միության երկաթուղին է, իսկ որպես տարանցիկ փոխադրման հայտարարագիր ներկայացվում են երկաթուղային բեռնագիրը և առևտրային փաստաթղթերը, ապա Մաքսային միության երկաթուղին ամսաթիվ պարունակող դրոշմակնիք է դնում ճանապարհային ամփոփագրի լրացուցիչ օրինակների վրա: Ամսաթիվ պարունակող դրոշմակնիքով ճանապարհային ամփոփագրի լրացուցիչ օրինակը փաստաթուղթ է, որով հաստատվում են Մաքսային միության երկաթուղու՝ որպես մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի հայտարարատու հանդես գալու իրավասությունները:

Մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի կիրառման դեպքում, երկաթուղային տրանսպորտով օտարերկրյա ապրանքները Մաքսային միության մաքսային տարածք ժամանելու վայրի մաքսային մարմնից մինչև այդ տարածքից դրանք դուրս բերելու վայրի մաքսային մարմին տեղափոխելու ժամանակ չի պահանջվում մաքսային հայտարարագրում նշել ապրանքների արժեքը:

Եթե նշանակման մաքսային մարմին չառաքված ապրանքների նկատմամբ հնարավոր չէ որոշել վճարման ենթակա մաքսատուրքերի, հարկերի գումարը՝ մաքսային մարմիններում դրանց արժեքների մասին հստակ տվյալների բացակայության պատճառով, ապա մաքսատուրքերի, հարկերի գումարները որոշվում են մաքսատուրքերի, հարկերի ամենամեծ դրույքաչափով, ինչպես նաև այն ապրանքների քանակով և (կամ) արժեքով, որոնք կարող են որոշվել առկա տվյալների հիման վրա:

Արդյունքում ապրանքների արժեքի վերաբերյալ ճշգրիտ տեղեկությունները հաստատելիս՝ կատարվում է հավելյալ վճարված կամ հավելյալ գանձված մաքսատուրքերի, հարկերի գումարների վերադարձ կամ չվճարված գումարների գանձում՝ Մաքսային միության Մաքսային օրենսգրքին համապատասխան:

Հոդված 4

Ուղարկող մաքսային մարմիններն իրավասու են պահանջել ներկայացնելու առևտրային և այլ փաստաթղթեր, որոնք թույլ կտան մաքսային հսկողության նպատակներով նույնականացնել տեղափոխվող ապրանքները, և որոնց տրամադրումը նախատեսված է Մաքսային միության մաքսային օրենսդրությամբ:

Անհրաժեշտ փաստաթղթերը չներկայացնելու դեպքում, ուղարկող մաքսային մարմիններն իրավասու են սահմանային երկաթուղային կայարաններում կանգնեցնել ապրանքներ փոխադրող՝ միջազգային փոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցները, այդ թվում՝ Մաքսային միության մաքսային տարածքի սահմաններից դուրս դրանք վերադարձնելու նպատակով:

Հոդված 5

Մաքսային տարանցման ժամկետը սահմանվում է ուղարկող մաքսային մարմնի կողմից՝ Մաքսային միության մաքսային օրենսդրության համաձայն՝ հաշվի առնելով ՄԲՀՀ-ի դրույթները:

Մաքսային տարանցման ժամկետը սահմանելիս հաշվի են առնվում՝ տեսակավորման կայարաններում շարժակազմերի կազմաքանդման, տրանսպորտային միջոցների տեխնիկական վերանորոգման և հսկողություն իրականացնող մարմինների կողմից կատարվող գործողությունների հետ կապված՝ տրանսպորտային միջոցն ուղերթի ընթացքում կանգնեցնելու հնարավոր դեպքերը:

Հոդված 6

1. Երկաթուղային տրանսպորտով փոխադրվող այն ապրանքների բեռնաթափումը, փոխաբեռնումը (վերաբեռնումը) և դրանց հետ իրականացվող բեռնման-բեռնաթափման այլ աշխատանքները, որոնք կապված չեն միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վրա դրված մաքսային կապարակնիքները և կնիքները հանելու հետ, կամ երբ միջազգային փոխադրման տրանսպորտային միջոցների վրա չկան դրված մաքսային կապարակնիքներ և կնիքներ՝ թույլատրվում է միայն այն մաքսային մարմնին նախնական ծանուցումից հետո, որի գործունեության տարածքում իրականացվում է ապրանքների փոխաբեռնումը: Ծանուցում է համարվում Մաքսային միության երկաթուղու կողմից այդ մաքսային մարմնին արդյունավետ կապուղիներով ուղարկված՝ կամայաբար շարադրված գրավոր դիմումը, որը պարունակում է տեղեկություններ՝

-տարանցման հայտարարագրի համարի վերաբերյալ,

-ուղարկող մաքսային մարմնի և նշանակման մաքսային մարմնի վերաբերյալ,

-այն երկաթուղային կայարանի վերաբերյալ, որտեղ պետք է իրականացվեն բեռնման-բեռնաթափման աշխատանքները,

-կոնտեյների համարի վերաբերյալ (ապրանքները կոնտեյներներով փոխադրելու դեպքում)

Դիմումը պետք է ստորագրված լինի Մաքսային միության երկաթուղու իրավասու պաշտոնատար անձի կողմից:

2. Բեռնման-բեռնաթափման աշխատանքների իրականացումից հետո ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում Մաքսային միության երկաթուղին արդյունավետ կապուղիներով ուղարկում է Մաքսային միության անդամ պետությունների օրենսդրությամբ նախատեսված ընդհանուր ձևաչափի ակտի պատճենն այն մաքսային մարմնին, որի գործունեության տարածքում իրականացվել են բեռնման-բեռնաթափման աշխատանքները:

Ընդհանուր ձևաչափի ակտի առաջին օրինակը կցվում է երկաթուղային բեռնագրին և Մաքսային միության երկաթուղու կողմից ներկայացվում նշանակման վայրի մաքսային մարմնին:

Տարանցման հայտարարագիր, տրանսպորտային (փոխադրման) փաստաթղթեր ներկայացնելն այն մաքսային մարմնին, որի գործունեության տարածքում իրականացվել են բեռնման-բեռնաթափման աշխատանքները, չի պահանջվում:

3. Այն մաքսային մարմինը, որի գործունեության տարածքում իրականացվել են բեռնման-բեռնաթափման աշխատանքները, ընդհանուր ձևաչափի ակտը ստանալու օրվանից ոչ ուշ, քան մեկ օրվա ընթացքում նշանակման վայրի մաքսային մարմնին արդյունավետ կապուղիներով, այդ թվում՝ տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ, ուղարկում է բեռնման-բեռնաթափման աշխատանքների մասին տեղեկությունները:

Հոդված 7

Մաքսային միության այն երկաթուղին, որն ապրանքներն ընդունել է փոխադրման համար ՄԲՀՀ-ի -ի համաձայն, ապրանքները մաքսային տարանցման մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրելիս իր պարտավորությունները չկատարելու համար կրում է պատասխանատվություն Մաքսային միության այն անդամ պետության օրենսդրության համաձայն, որի տարածք են ներսերվել այդ ապրանքները:

Հոդված 8

1. Եթե մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի հայտարարատուն Մաքսային միության երկաթուղին է, ապա մաքսատուրքի, հարկերի վճարման պարտավորությունը դրվում է.

1) Մաքսային միության այն երկաթուղու վրա, որի կողմից ուղարկող մաքսային մարմնին տրամադրվում է տարանցման հայտարարագիր՝ մաքսային տարանցման ընթացակարգը ապրանքների վրա տարածելու համար՝ սկսած ուղարկող մաքսային մարմնի կողմից տարանցման հայտարարագիրը գրանցելու պահից,

2) Մաքսային միության այն երկաթուղու վրա, որը Մաքսային միության մեկ այլ երկաթուղուց ապրանքներ է ընդունում փոխադրման համար՝ սկսած Մաքսային միության

մեկ այլ երկաթուղուց ապրանքները փոխադրման համար ՄԲՀՀ-ին համապատասխան ընդունելու պահից:

2. Մաքսային միության մաքսատուրքերի, հարկերի վճարման հետ կապված երկաթուղու պարտավորությունը դադարում է.

1) Մաքսային միության այն երկաթուղու մոտ, որը ապրանքները ՄԲՀՀ-ին համապատասխան փոխադրման համար հանձնում է Մաքսային միության մեկ այլ երկաթուղու՝ սկսած ապրանքները Մաքսային միության մեկ այլ երկաթուղու կողմից փոխադրման համար ընդունելու պահից,

2) Մաքսային միության մաքսային օրենսգրքի 227-րդ կամ 228-րդ հոդվածներով սահմանված դեպքերում,

3. Մաքսատուրքերի, հարկերի վճարման ժամկետը, ինչպես նաև դրանց՝ վճարման ենթակա չափը սահմանվում է Մաքսային միության մաքսային օրենսգրքին համապատասխան:

4. Եթե մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի հայտարարատուն Մաքսային միության երկաթուղին չէ, ապա երկաթուղին մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի հայտարարատուի հետ համատեղ կրում է պատասխանատվություն մաքսատուրքերի, հարկերի վճարման համար:

Հոդված 9

Ուղարկող մաքսային մարմնի կողմից սահմանված մաքսային տարանցման ժամկետում ապրանքները նշանակման մաքսային մարմնին չուղարկելու դեպքում՝ Մաքսային միության ցանկացած երկաթուղի մաքսային մարմնի պահանջով ներկայացնում է տեղեկատվություն փնտրվող ապրանքների մասին:

Պահանջներն ու տեղեկությունները կարող են փոխանցվել ինչպես գրավոր ձևով, այնպես էլ տեղեկատվական համակարգերի և տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործմամբ:

Հոդված 10

Նշանակման կայարանում մաքսային մարմնի բացակայության դեպքում, մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի իրականացումն ավարտելու համար տարանցման հայտարարագիրը, ինչպես նաև փոխադրողի մոտ գտնվող այլ փաստաթղթերը կարող են նշանակման մաքսային մարմնին ներկայացվել այն անձի կողմից, որը Մաքսային միության երկաթուղու հետ կնքել է պայմանագիր, որի համաձայն նա կարող է կատարել մաքսային գործողություններ՝ կապված մաքսային տարանցման մաքսային ընթացակարգի իրականացումն ավարտելու հետ:

Հոդված 11

1. Կողմերի միջև սույն Համաձայնագրի դրույթների մեկնաբանման և (կամ) կիրառման հետ կապված վեճերը կարգավորվում են, առաջին հերթին, բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով:

2. Եթե վեճի կողմերը բանակցությունների և խորհրդակցությունների միջոցով չեն կարգավորում վեճը՝ դրանց անցկացման վերաբերյալ վեճի կողմերից մեկի կողմից վեճի մյուս կողմին պաշտոնական գրավոր պահանջ ներկայացնելու օրվանից սկսած վեց ամսվա ընթացքում, ապա, վեճի կարգավորման միջոցի վերաբերյալ վեճի կողմերի միջև այլ պայմանավորվածության բացակայության դեպքում, վեճի ցանկացած կողմ կարող է այդ վեճը փոխանցել Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը:

3. Մաքսային միության հանձնաժողովը Կողմերին աջակցություն է ցուցաբերում վեճի կարգավորման հարցում՝ նախքան այդ վեճը Եվրասիական տնտեսական համայնքի դատարանի քննությանը հանձնելը:

Հոդված 12

Սույն Համաձայնագրում կարող են կատարվել փոփոխություններ, որոնք ձևակերպվում են սույն Համաձայնագրի անբաժանելի մաս կազմող առանձին արձանագրություններով:

Հոդված 13

Սույն Համաձայնագիրը ենթակա է վավերացման և ժամանակավորապես կիրառվում է «Մաքսային միության մաքսային օրենսգրքի մասին» 2009 թվականի նոյեմբերի 27-ի պայմանագիրն ուժի մեջ մտնելու օրվանից:

Սույն Համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի պետությունների կողմից սույն Համաձայնագիրն ուժի մեջ մտնելու համար անհրաժեշտ ներպետական ընթացակարգերը կատարելու մասին ավանդապահի կողմից վերջին գրավոր ծանուցումը դիվանագիտական ուղիներով ստանալու օրվանից:

Կատարված է Սանկտ Պետերբուրգ քաղաքում, 2010 թվականի մայիսի 21-ին, մեկ քնօրինակից՝ ռուսերենով:

Սույն Համաձայնագրի քնօրինակը պահվում է Մաքսային միության հանձնաժողովում, որը յուրաքանչյուր Կողմի տրամադրում է դրա հաստատված պատճենը:

**Բելառուսի
Հանրապետության
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ղազախստանի
Հանրապետության
Կառավարության կողմից**

(ստորագրություն)

**Ռուսաստանի
Դաշնության
Կառավարության կողմից**

(ստորագրություն)